ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Զբոսաշրջության զարգացման 2018 թվականի ծրագրի միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Զբոսաշրջության պետական կոմիտեն հայտարարել է կազմակերպությունների ընտրության մրցույթ (*տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» թերթի 2017 թ. դեկտեմբերի 28-ի թիվ 234 համարում)*:

Զբոսաշրջության միջազգային օրվան նվիրված տոնակատարության կազմակերպման, «Հայաստանյան և օտարերկրյա լրագրողների և զբոսաշրջության ոլորտի մասնագետների ճանաչողական այցերի կազմակերպում» և «Միջազգային համագործակցություն» միջոցառումների իրականացման համար ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեն դրամաշնորհի տրամադրման պայմանագրեր է կնքել «Բեստ Փարտներ» ՍՊԸ հետ:

«Բեստ Փարտներ» ՍՊԸ գտնվելու վայրը՝ Երևան, Գյուրջյան 3

ԾՐԱԳԻՐԸ ԿՑՎՈՒՄ Է.

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ամսաթիվը՝ 27 Սեպտեմբերի 2018

Վայրը՝ Հանրապետության հրապարակ նախկին արտաքին գործերի նախարարության շենք կամ 300 և ավելի տեղ ունեցող, ՀՀ Զբոսաշրջության պետական կոմիտեի հետ համաձայնեցված որևէ այլ տարածք, որը համահունչ կլինի օրվա խորհրդին:

Մինչև միջոցառումը՝

- ✓ Միջոցառման համար հատուկ տարբերանշանի /լոգոյի/ մշակում
- ✓ Տարբերանշանով հրավիրատոմսերի, շնորհակալագրերի, PRESS/PHOTO wall-ի ու բաններների տպագրություն
- ✓ Միջոցառման դահլիճի ձևավորում՝ ապահովելով հատուկ լուսային և ձայնային էֆֆեկտներ, LED էկրանների կամ մոնիտորների տեղադրում
- ✓ Ծաղկային ձևավորման և ծաղկեփնջերի պատվիրում
- ✓ Սպասարկող անձնակազմի համար Հայաստանում գործող բոլոր ավիաընկերությունների բորտուղեկցուրդների համազգեստների ապահովում՝ համաձայնեցնելով ավիաընկերությունների հետ
- ✓ Աշխարհի տարբեր ազգերի ներկայացուցիչների մասնակցությամբ «Մենք գալիս ենք Հայաստան» տեսահոլովակի պատրաստում և մոնտաժ:
- ✓ Միջոցառման օրը կազմակերպվող վիճակահանության նախապատրաստում, այդ թվում մրցանակային փաթեթների կազմում՝
    - 3-օրյա հանգիստ Հայաստանի տարբեր հյուրանոցներում
    - 3-օրյա ուղևորություն Արցախ երկու անձի համար
    - Հայաստանի մի շարք թանգարանների տոմսեր
    - Էքստրեմալ զբոսաշրջային փաթեթներ՝ զիփլայն, սքայբոլ և այլն

Միջոցառման բովանդակությունը՝

- <u>Պաշտոնական մաս՝</u>

✓ Պատվիրատուին առաջարկվում է կազմակերպել մամլո ասուլիս նվիրված Զբոսաշրջության միջազգային օրվան: Թեման, բանախոսներ և վայրը նախապես կհամաձայնեցվեն պատվիրտուի հետ:

✓ Միջոցառման բացման պաշտոնական արարողություն

Բացման ելույթներ

Հուշամեդալների և շնորհակալագրերի հանձնում

Ողջույնի խոսքեր

- <u>Ոչ պաշտոնական մաս՝</u>

✓ Զբոսաշրջության միջազգային օրվան նվիրված ՄԱԿ ԶՀԿ գլխավոր քարտուղարի ուղերձի հեռարձակում

✓ Հատուկ միջացառման համար նկարահանված «Մենք գալիս ենք Հայաստան» տեսահոլովակի հեռարձակում

✓ Կախված ընտրված տարածքի հնարավորություններից, հայկական երկու պարային բեմադրություն, այդ թվում մեկ կանացի մենապար, մեկ տղամարդկանց խմբային պար /տարածքային հնարավորության դեպքում հատված «Գայանե» բալետից- Սուսերով պարը/

✓ «Տերյան» մշակութային կենտրոնի «Հին Հայկական արքայական հանդերձներ» հավաքածուի ցուցադրություն:

✓ Հայկական ազգային կոկտեյլի պատրաստման ցուցադրություն և հյուրասիրություն

✓ Պարային ֆլեշմոբի կազմակերպում :

✓ Վիճակահանության իրականացում, ձևաչափը նախապես կհամաձայնեցվի պատվիրատուի հետ

- <u>Միջոցառման անցկացման մանրամասներ՝</u>

<u>Հաղորդավարներ՝</u>

Նարեկ Մարգարյան և Սերգեյ Սարգսյան – Արմբոմեղի հաղորդաշար /հայերեն և անգլերեն/, կամ համարժեք, նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

<u>Երաժշտական ծրագիր՝</u>

✓ Միջոցառման ամբողջ ընթացքում երաժշտության ապահովման համար բարձրակարգ DJ-ի ապահովում:

Երաժշտական համար՝

✓ Արամ MP3 և Իվետա Մուկուչյան – Դաշտերով ծրագիր /տևողությունը՝ 40 ր./

Կամ

✓ Գարիկ Պապոյան և Սոնա Ռուբենյան – Հայկական էսքիզներ ծրագիր /տևողությունը՝ 1 ժ. 20 ր./

կամ համարժեք, նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

<u>Սենդի կազմակերպում՝</u>

- ✓ 300 անձի համար նախատեսված ֆուրշետի կազմակերպում
- ✓ Ալկոհոլայի խմիչքների համտեսի տաղավարներ՝ հայկական արտադրության գինիներ, կոնյակ, կոկտեյլներ:

Ջ. Նիկողոսյան
տնօրեն